



California's Protection & Advocacy System
Toll-Free (800) 776-5746

ՍՕ468/SB 468 (Էմերսոն/Բիլլ/Միշել/Չեսսրո) Կողմնորոշման նահանգային ծրագիր

Դեկտեմբեր 2013թ., Հր. #F077.10-Armenian

Մենասի թիվ 468 օրինագծով (SB 468¹) նախատեսվում է Կողմնորոշման նահանգային ծրագրի ստեղծում, որը կամավոր ծրագիր է՝ որպես տարածքային կենտրոնների ծառայությունների ավանդական ձևին այլընտրանք: Այն սպառողների և նրանց ընտանիքների համար ապահովում է նրանց անհրաժեշտ ծառայությունների և աջակցության նկատմամբ ավելի մեծ վերահսկողություն: Սպառողները և նրանց ընտանիքները, օրինակ, կարող են ձեռք բերել առկա ծառայությունները ծառայություն մատուցողներից կամ տեղական բիզնեսներից, վարձել աջակցող աշխատողներին կամ ձեռք բերել հատուկ պայմանավորվածություններ տեղական համայնքների ռեսուրսների հետ: Կողմնորոշում ծրագիրը սպառողներին և նրանց ընտանիքներին տրամադրում է անհատական բյուջե², որը կարող է օգտագործվել ձեռք բերելու համար իրենց անհրաժեշտ ծառայությունները և աջակցությունն իրենց Անհատական ծրագրի պլանն իրականացնելու համար:

¹ http://www.leginfo.ca.gov/pub/13-14/bill/sen/sb_0451-0500/sb_468_bill_20131009_chaptered.pdf - (Վերադառնալ հիմնական փաստաթուղթ)

² Տե՛ս 6-րդ հարցը անհատական բյուջեի բացատրության համար - (Վերադառնալ հիմնական փաստաթուղթ)

1. Ե՞րբ պատրաստ կլինի և կիրականացվի Կողմնորոշման նահանգային ծրագիրը

Կողմնորոշման ծրագրի կայացման համար կպահանջվի մի քանի տարի: Առաջինը՝ Ջարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության վարչություն մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը պետք է դիմի դաշնային Medicaid-ի ֆինանսավորմանը՝ ծրագիրը սահմանելու և ֆինանսավորելու համար: Դաշնային մակարդակով հաստատումը ստանալուց հետո, ամենայն հավանականությամբ 2015 թվականին, ծրագիրը հասանելի կլինի նահանգի ամբողջ տարածքում, սակայն առաջին երեք տարիների ընթացքում ընդգրկվեն 2500 անհատ: Աստիճանական ներդրման եռամյա ժամանակահատվածից հետո ծրագիրը հասանելի կլինի համապատասխանող բոլոր անձանց համար կամավոր հիմունքներով:

2. Ո՞վ է համապատասխանում Կողմնորոշման ծրագրին

Ծրագրին համապատասխանելու համար, անձը՝

- (1) պետք է ունենա զարգացման խանգարում, ինչպես սահմանվում է Լանթերմանի օրենքում³ և ներկայումս ստանալիս լինի ծառայություններ Լանթերմանի օրենքի շրջանակներում: Սա նշանակում է, որ նորածիններից մինչև երկու տարեկան սպառողները, ովքեր ստանում են ծառայություններ «Կալիֆորնիայի Վաղ միջամտության ծառայություններ»⁴ ծրագրից, չեն կարող մասնակցել: Այնուամենայնիվ, 3 տարեկան կամ ավելի մեծահասակ սպառողները, ովքեր նոր են տարածաշրջանային

³ Տես՝ Բարեկեցության և հաստատությունների օրենսգրքի 4512-րդ բաժին- ([Վերադառնալ հիմնական փաստաթուղթ](#))

⁴ Վաղ միջամտության մասին օրենքը կարելի է գտնել Կառավարության օրենսգրքի 95000-րդ բաժնում և հաջորդիվ - ([Վերադառնալ հիմնական փաստաթուղթ](#))

կենտրոնի համակարգում, կարող են մասնակցել Կողմնորոշման ծրագրին:

(2) չպետք է ապրի երկարաժամկետ խնամքի լիցենզավորված կենտրոնում, եթե անցում չի կատարում այն կենտրոնից⁵.

(3) համաձայնում է հետևյալին՝

- ստանալ ուղղորդում Կողմնորոշման ծրագրին մասնակցելու համար,
- օգտագործել Կողմնորոշման ծառայությունները և աջակցությունը միայն, երբ հասանելի են ընդհանուր բնույթի ծառայությունները և աջակցությունը⁶,
- կառավարել ծառայությունները և աջակցությունը ձեր անհատական բյուջեի շրջանակներում,
- օգտվել ձեր կողմից ընտրված՝ տարածքային կենտրոնի հետ պայմանագիր ունեցող ֆիսկալ կառավարչի ծառայություններից:

3. Ինչպե՞ս է իրականացվում Կողմնորոշման ծրագիրը

Յուրաքանչյուր տարածքային կենտրոնից պահանջվում է իրականացնել Կողմնորոշման ծրագիր և կատարել հետևյալը՝

⁵ Այս կենտրոնները սահմանվում են Կալիֆորնիայի Կանոնագրքի 17-րդ գլխի 54302 բաժնի (ա) ենթաբաժնի (44)-րդ պարբերությունում -

[\(Վերադառնալ հիմնական փաստաթուղթ\)](#)

⁶ Ընդհանուր ծառայություններից օգտվելու պահանջը հավասարազոր է ավանդական տարածքային կենտրոնի համակարգում ընդհանուր ծառայությունների պահանջին: -

[\(Վերադառնալ հիմնական փաստաթուղթ\)](#)

1) կապ հաստատել տեղական սպառողների կամ ընտանեկան կազմակերպությունների հետ՝ սպառողների և ընտանիքների շրջանում աուրիչ գործողություններ իրականացնելու համար Կողմնորոշման ծրագրի մասին տեղեկություններ տրամադրելու նպատակով և օգնելու համար, որ ծրագիրը հասանելի լինի մասնակիցների տարբեր խմբերին և այն համայնքներին, որտեղ ծառայությունները ոչ բավարար մակարդակով են տրամադրվում և

2) համագործակցել տեղական սպառողների կամ ընտանեկան կազմակերպությունների հետ շահագրգիռ սպառողների և նրանց ընտանիքների համար Կողմնորոշման ծրագրի վերաբերյալ համատեղ վերապատրաստում իրականացնելու համար:

4. Ինչպե՞ս են տարածքային կենտրոնները որոշելու, թե ովքեր են մասնակցելու ծրագրին եռամյա աստիճանական անցման փուլում

Կողմնորոշման ծրագիրը պետք է հասանելի լինի այն անհատների համար, ովքեր ներկայացնում են նահանգի հաշմանդամության, էթնիկ և աշխարհագրական բազմազանությունը: Թեև Սենատի թիվ 468 օրինագիծը (SB468) չի սահմանում մասնակիցների ընտրության ընթացակարգը աստիճանական ներդրման նախնական ժամանակահատվածում, այնուամենայնիվ տարածքային կենտրոնները պետք է ապահովեն, որ ծրագիրը հասանելի լինի նրանց սպասարկման շրջանում սպասարկվող սպառողների տարբեր խմբերի համար:

Առաջին երեք տարիներին, Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության վարչությունը կորոշի Կողմնորոշման ծրագրի մասնակիցների թիվը ըստ յուրաքանչյուր տարածքային կենտրոնի: Սա հիմնված կլինի տարածքային կենտրոնների կողմից սպասարկվող ընդհանուր սպառողների համապատասխան տոկոսի վրա՝ հանած Կողմնորոշման պիլոտային ծրագրերում մնացած որևէ մասնակից:

Օրինագծով նաև սահմանվում է, որ ավանդական լեզվաբանական, մշակութային, սոցիալ-հոգեբանական և էթնիկ համայնքներում, որտեղ ծառայությունները ոչ բավարար մակարդակով են տրամադրվում, սպառողները հաճախ բախվում են խնդիրների անհրաժեշտ տարածքային կենտրոնի ծառայությունները գնահատելիս, և որ Կողմնորոշման ծրագիրն առաջարկում է ծառայության ավելի մեծ ճկունություն, որը կօգնի խթանել անհրաժեշտ ծառայությունների հասանելիությունը այս սպառողների և նրանց ընտանիքների համար:

5. Ի՞նչպես է իմ Անհատական ծրագրի պլանը մշակվում Կողմնորոշման ծրագրում

Անհատական ծրագրի պլանի ձեր թիմը ձեր Անհատական ծրագրի պլանը մշակելու համար կօգտագործի անհատական պլանավորման գործընթաց: Անհատական ծրագրի պլանը կներառի ձեր կողմից ընտրված և ուղղորդված ծառայություններ և աջակցություն՝ ձեր Անհատական ծրագրի պլանի նպատակները ձեռք բերելու համար: Ձեր Անհատական ծրագրի պլանի մասին տեղեկությունները կարելի է գտնել մեր՝ «Լանթերմանի օրենքով նախատեսված իրավունքներ» հրատարակությունում, 4-րդ գլուխ, Անհատական ծրագրի պլաններ: <http://www.disabilityrightsca.org/pubs/PublicationsRULAEnglish.htm>

6. Ինչպե՞ս է որոշվում իմ անհատական բյուջեն Կողմնորոշման ծրագրում

Անհատական բյուջեն տարածքային կենտրոնի ֆինանսավորման գումարն է, որը տրամադրվում է ձեզ՝ ձեր Անհատական ծրագրի պլանն իրականացնելու համար անհրաժեշտ ծառայություններ և աջակցություն ձեռքբերելու նպատակով: Անհատական բյուջեն հաշվարկվում է 12 ամիսը մեկ անգամ, սակայն կարող է վերանայվել՝ ձեր գործում, կարիքներում կամ ռեսուրսներում ցանկացած փոփոխություն արտացոլելու համար:

Տարածքային կենտրոնի ներկայիս սպառողների համար բյուջեն համարժեք է վերջին 12 ամիսների ընթացքում տարածքային կենտրոնի կողմից կատարված՝ ծառայության ձեռքբերման գծով ծախսերի ընդհանուր գումարի 100%-ին: Այս գումարը կարող է ճշգրտվել Անհատական ծրագրի պլանի թիմի կողմից, եթե թիմը որոշի, որ անհրաժեշտ է ճշգրտում կատարել՝ պայմանավորված հետևյալ պատճառներից որևէ մեկով՝

- ձեր գործում, կարիքներում կամ ռեսուրսներում կատարվել է փոփոխություն, որը կհանգեցնեք ծառայության ձեռքբերման գծով ծախսերի ավելացման կամ նվազեցման կամ
- կան նախկին կարիքներ կամ ռեսուրսներ, որոնք չեն արտացոլվել Անհատական ծրագրի պլանում, որը կհանգեցնեք ծառայության ձեռքբերման ծախսերի ավելացման կամ նվազեցման:

Մասնակցի համար, ով նոր է տարածքային կենտրոնի համակարգում կամ 12 ամիսների ընթացքում չունի ծառայության գնման գծով ծախսեր, Անհատական ծրագրի պլանի թիմը կորոշի անհրաժեշտ ծառայությունները և աջակցությունը և առկա ռեսուրսները: Տարածքային կենտրոնը կօգտագործի այս տեղեկությունները՝ վերհանելու համար ծառայությունների և աջակցության տրամադրման ծախսերը՝ ելնելով տարածքային կենտրոնի կողմից վճարվող միջին ծախսից, եթե տարածքային կենտրոնը որոշի, որ դուք ունեք հատուկ կարիքներ, որոնց համար անհրաժեշտ է ավելի մեծ կամ փոքր ծախսեր: Այս գումարը կլինի ձեր անհատական բյուջեն, եթե այն չենթարկվի ճշգրտումների, ինչպես նկարագրված է ստորև:

Տարածքային կենտրոնը պետք է հաստատի, որ տարածքային կենտրոնի՝ անհատական բյուջեի մասով ծախսերը՝ ներառյալ ներկայիս սպառողների համար ցանկացած ճշգրտում, կառաջանային անկախ Կողմնորոշման ծրագրում ձեր մասնակցությունից:

Բյուջեն չի ենթարկվի ճշգրտումների, որպեսզի ներառի անհատական ֆասիլիտատորի կամ ֆինանսական կառավարչի ծառայությունների համար լրացուցիչ ֆինանսական միջոցները:

7. Ո՞վ կարող է աջակցել ինձ անհատական պլանավորման գործընթացում

Դուք կարող եք դիմել անհատական ֆասիլիտատորի, որին նրանք ընտրում են անհատական պլանավորման և Անհատական ծրագրի պլան գործընթացներում աջակցելու նպատակով: Անհատական ֆասիլիտատորը պետք է լինի այնպիսի անձ, ով չի տրամադրում ծառայություններ ձեզ և չի հանդիսանում ձեզ ծառայություններ մատուցողի աշխատակից: Դուք կարող եք նաև դիմել տարածքային կենտրոնի ծառայության համակարգողին այս գործառույթներում ձեզ աջակցելու նպատակով: Անհատական ֆասիլիտատորը կարող է խորհրդատվություն տրամադրել ձեզ անհատական պլանավորման հանդիպումներում, աջակցել ձեզ ձեր բյուջեի հետ կապված գիտակցված ընտրություն կատարելու հարցում և օգնել ձեզ վերհանելու և ապահովելու ծառայությունների մատուցումը: Անհատական ֆասիլիտատորի ծախսերը վճարվում են ձեր անհատական բյուջեից:

8. Ո՞վ է աջակցում ինձ իմ բյուջեն կառավարելու հարցում, որպեսզի իմ դրամական միջոցները բավարարեն ամբողջ տարի

Անհրաժեշտ է, որպեսզի մասնակիցները դիմեն տարածքային կենտրոնի հետ պայմանագիր ունեցող ֆիսկալ կառավարչի, որը կօգնի ձեր անհատական բյուջեի ֆինանսական միջոցները կառավարելու և տեղաբաշխումն ուղղորդելու հարցում և կապահովի, որ դուք ունենաք բավարար միջոցներ ամբողջ տարվա ընթացքում ձեր Անհատական ծրագրի պլանն իրականացնելու համար: Այս ծառայությունները կարող են ներառել հաշիվների վճարումը, սպասարկող և աջակցող աշխատողներին աշխատանքի ընդունման հարցում աջակցելը, հաշվապահական հաշվառումը և գործող օրենքների պահանջներին

համապատասխանությունը: Ֆիսկալ կառավարչի ծախսերը, բացառությամբ դատվածության փաստի ստուգման ծախսերից վճարվում են ձեր անհատական բյուջեից: Դուք և ձեր տարածքային կենտրոնի ծառայությունները համակարգողը կստանաք ամսական քաղվածք ֆիսկան կառավարչից, որտեղ կարտացոլվեն յուրաքանչյուր տողում բյուջեի գումարը, ծախսած և չծախսված գումարները:

9. Կարո՞ղ եմ արդյոք դրամական միջոցների տեղափոխություն կատարել իմ բյուջեում

Օրինագծով թույլ է տրվում բյուջեի ցանկացած տողով նախատեսված ֆինանսական միջոցների մինչև 10 տոկոսը փոխանցել բյուջեի մեկ այլ տող կամ տողեր, ինչպես նաև թույլ է տրվում կատարել 10 տոկոսից ավելի փոխանցումներ՝ պայմանով, որ փոխանցումը հաստատվի ձեր Անհատական ծրագրի պլանի թիմի կամ տարածքային կենտրոնի կողմից: Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության վարչությունը սահմանում է բյուջեի այն տողերը, որտեղ ներդրում են կատարում շահագրգիռ կողմերը:

10. Ինչպիսի՞ ծառայություններից կարող եմ օգտվել և ինչպիսի՞ աջակցություն կարող եմ ստանալ Կողմնորոշման ծրագրով

Կողմնորոշման ծրագրով ֆինանսավորվում են միայն այն ծառայությունները և աջակցությունը, որոնք համապատասխանում են դաշնային հավասարաչափ համաֆինանսավորմանը, և միայն այն ժամանակ, երբ ընդհանուր բնույթի ծառայությունները (օրինակ՝ այլ պետական ծառայություններ, ինչպիսիք են հատուկ կրթությունը, տնային խնամքի ծառայությունները, Մեդի-Կալը կամ ապահովագրական ծառայությունները) հասանելի չեն: Դա նաև հնարավորություն կտա ձեռք

բերելու այնպիսի «կասեցված» ծառայություններ, ինչպիսիք են ժամանցը և հանգիստը, ճամբարները, ոչ բժշկական թերապիաները և այլն⁷:

**11. Ի՞նչ կլինի, եթե մի տարածքային կենտրոնից տեղափոխվեմ մյուսը:
Կարո՞ղ եմ արդյոք շարունակել մասնակցել Կողմնորոշման ծրագրին**

Դուք կշարունակեք օգտվել և ստանալ կողմնորոշման ծառայություններ, եթե տեղափոխվեք մեկ այլ տարածքային կենտրոնի սպասարկման շրջան՝ պայմանով, որ կշարունակեք համապատասխանել ծրագրին: Օրինագծով պահանջվում է, որ ձեր անհատական բյուջեի մնացորդը վերաբաշխվի ստացող տարածքային կենտրոնին:

**12. Ի՞նչ կլինի, եթե այլևս չցանկանամ մասնակցել Կողմնորոշման
ծրագրին կամ այլևս չհամապատասխանեմ դրան**

Օրինագծով պահանջվում է, որ տարածքային կենտրոնները նախատեսեն ձեր տեղափոխումը Կողմնորոշման ծրագրից ավանդական տարածքային կենտրոններ և խնամքի ծառայություններ, եթե այլևս չեք համապատասխանում կամ ինքնակամ ցանկանում եք դուրս գալ ծրագրից:

**13. Եթե դուրս գամ Կողմնորոշման ծրագրից, կարո՞ղ եմ արդյոք
վերադառնալ**

Եթե տարածքային կենտրոնը գտնում է, որ չեք համապատասխանում Կողմնորոշման ծրագրին, ապա կարող եք վերադառնալ ծրագիր համապատասխանության բոլոր պահանջները բավարարելուց և ձեր պլանավորման թիմի կողմից հաստատվելուց հետո: Եթե ինքնակամ եք դուրս գալիս ծրագրից, ապա չեք կարող վերադառնալ ծրագիր առնվազն տասներկու ամիս: Ծրագրի առաջին երեք տարվա ընթացքում ձեր

⁷ Սոցիալական ապահովության և հաստատությունների օրենսգիրք, բաժին 4648.5(ա) և 4686.5 - ([Վերադառնալ հիմնական փաստաթուղթ](#))

վերադառնալու իրավունքը պայմանավորված է նաև նրանով՝ արդյոք ձեր տարածքային կենտրոնը համալրել է իր մասնակիցների թիվը, թե ոչ:

14. Կարո՞ղ է արդյոք իմ տարածքային կենտրոնը պահանջել, որ մասնակցեմ Կողմնորոշման ծրագրին, եթե ես չեմ ցանկանում

Կողմնորոշման ծրագրին մասնակցությունն ամբողջովին կամավոր հիմունքներով է: Տարածքային կենտրոնը չի կարող պահանջել դրան մասնակցել:

15. Կարո՞ղ եմ արդյոք մասնակցել Կողմնորոշման ծրագրին, եթե գտնվում եմ երկարաժամկետ խնամքի լիցենզավորված հաստատությունում

Եթե ներկայումս բնակվում եք երկարաժամկետ խնամքի լիցենզավորված հաստատությունում, ապա չեք համապատասխանում Կողմնորոշման ծրագրին: Այնուամենայնիվ, կարող եք պահանջել, որ տարածքային կենտրոնը մատուցի անհատական պլանավորման ծառայություններ՝ նախապատրաստելու համար ձեր տեղափոխումը Կողմնորոշման ծրագիր, եթե հիմնավորվում է, որ դուք պետք է տեղափոխվեք համայնք 90 օրվա ընթացքում: Այդ դեպքում տարածքային կենտրոնը պետք է նախաձեռնի անհատական պլանավորման ծառայությունների մատուցումը ձեր կողմից նման պահանջ ներկայացվելուց հետո 60 օրվա ընթացքում: Եթե պատրաստ չեք տեղափոխվելու համայնք, ապա կարող եք դիմել, որ Կողմնորոշման ծրագրով ձեր հետաքրքրվածությունը ներկայացվի ձեր Անհատական ծրագրի պլանում, և դիմել տարածքային կենտրոնին, որպեսզի վերջինս օգնի ձեզ մասնակցելու Կողմնորոշման ծրագրին որպես տեղափոխման գործընթացի մաս:

16. Եթե ես չեմ մասնակցում Մեդի-Կալին, կարո՞ղ եմ արդյոք մասնակցել Կողմնորոշման ծրագրին

Օրինագծով թույլատրվում է Կողմնորոշման ծրագրին այն սպառողների մասնակցությունը, որոնք չեն համապատասխանում Մեդի-Կալին՝

պայմանով, որ նրանք բավարարում են ծրագրին համապատասխանության մյուս բոլոր պահանջները, և որ նրանց կողմից ստացվող ծառայություններն ու աջակցությունը այլ կերպ համապատասխանում են դաշնային հավասարաչափ համաֆինանսավորմանը:

17. Ինչպե՞ս է Կողմնորոշման ծրագիրն ապահովում սպառողների անվտանգությունը

Օրինագծով սահմանվում են դատվածության փաստի ստուգման պահանջներ Կողմնորոշման ծրագրով ծառայություններ մատուցող և աջակցություն տրամադրող ընկերությունների նկատմամբ: Դրանով պահանջվում է, որ Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության վարչությունը ընդունի ծրագրային հրահանգ, որով կնույնականացվեն դատվածության փաստի ստուգման ենթակա՝ ոչ պայմանագրային ծառայություններ մատուցողները, այդ թվում՝ մասնակցին անմիջական անձնական խնամքի ծառայություններ մատուցող անձինք և այլ ոչ պայմանագրային ծառայություններ մատուցողները, որոնց դատվածության փաստի ստուգումը պահանջում է մասնակիցը կամ նրա ֆինանսական կառավարման ծառայությունը: Դատվածության փաստի ստուգումը ներառում է մատնահետքի ստուգման պահանջ բոլոր հնարավոր ծառայություններ մատուցողների համար: Դատվածության փաստի ստուգման ծախսը վճարում է ծառայություններ մատուցողը:

18. Ի՞նչ է լինում այն անձանց հետ, ովքեր մասնակցում են Կողմնորոշման պիլոտային ծրագրերին

Կողմնորոշման պիլոտային ծրագրերով ծառայություններ և աջակցություն ստացող անձինք կարող են շարունակել ծառայություններ և աջակցություն ստանալ Կողմնորոշման ծրագրով կամ անցնել ծառայությունների և աջակցության մատուցման ավանդական մոդելին տարածքային կենտրոնների համակարգում:

19. Ի՞նչ քայլեր կարող եմ ձեռնարկել, եթե համաձայն չեմ տարածքային կենտրոնի որոշման հետ

Լանթերմանի օրենքով սահմանված ընթացակարգային իրավունքները կիրառվում են Կողմնորոշման ծրագրի մասնակիցների նկատմամբ: Սա նշանակում է, օրինակ, որ դուք ծանուցում կստանաք, եթե տարածքային կենտրոնը գտնում է, որ չեք համապատասխանում Կողմնորոշման ծրագրին, կամ առաջարկում է փոփոխություններ կատարել ձեր բյուջեում: Սա նաև նշանակում է, որ դուք կարող եք լսումներ պահանջել, եթե համաձայն չեք տարածքային կենտրոնի որոշման հետ՝ Կողմնորոշման ծրագրին ձեր մասնակցության իրավունքի կամ ձեր բյուջեի չափի մասով:

20. Ինչպե՞ս է Կողմնորոշման ծրագրով ապահովվում թափանցիկությունը և հաշվետվողականությունը

Յուրաքանչյուր տարածքային կենտրոն պետք է ունենա կամավորական խորհրդատվական կոմիտե, որի անդամների մեծ մասը տարածքային կենտրոնի և Տեղական խորհրդի կողմից նշանակված սպառողներ և նրանց ընտանիքի անդամներ են: Հաճախորդների իրավունքների պաշտպանները նույնպես կոմիտեի անդամ են: Զարգացման խանգարումներ ունեցող անձանց հարցերով նահանգային խորհուրդը նույնպես հրավիրում է նահանգային խորհրդատվական կոմիտե՝ լավագույն փորձը վերհանելու, արդյունավետ ուսումնական նյութեր մշակելու և Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության վարչությանը բարելավումների մասով հանձնարարականներ տալու համար:

21.Ի՞նչ կարող են այժմ անել սպառողները և նրանց ընտանիքի անդամները ավելին լավ տեղեկանալու կամ ՍՕ 468-ով (SB 468) ստեղծված նահանգային Կողմնորոշման ծրագրի իրականացմանն աջակցելու համար

- Լուս Անջելեսի Աուտիզմի ընկերությունը պլանավորում է կազմակերպել դասընթացներ և կոնֆերանսներ, ինչպես նաև տրամադրել նյութեր, որոնք կօգնեն սպառողներին և նրանց ընտանիքի անդամներին ավելի տեղեկացված լինելուն: Տե՛ս Աուտիզմի ընկերության ինտերնետային կայքը՝ <http://www.autismla.org/1/> :
- Եթե դուք իրավունքների ինքնուրույն պաշտպանության խմբի կամ ընտանիքի անդամների խմբի անդամ եք, ապա դիմեք ձեր՝ Հաճախորդների իրավունքների պաշտպանին կամ տեղական խորհրդին՝ ձեր խմբի համար կողմնորոշման դասընթաց կազմակերպելու համար:
- Կիսվեք կողմնորոշման մասին տեղեկություններով այլ սպառողների կամ ընտանիքի անդամների հետ:
- Ձեր հաջորդ Անհատական ծրագրի պլանի վերաբերյալ հանդիպման ժամանակ դիմեք ձեր տարածքային կենտրոնին, որպեսզի ձեր Անհատական ծրագրի պլանում նշվի, որ հետաքրքրված եք մասնակցելու կողմնորոշման ծրագրին:
- Կամավոր հիմունքներով անդամակցեք ձեր տարածքային կենտրոնի խորհրդատվական կոմիտեին, երբ այն ձևավորվի՝ հավանաբար 2015 թվականին:
- Զարգացման խանգարումներ ունեցող անձանց սոցիալական ապահովության վարչությունը շահագրգիռ կողմերից ներդրում կստանա մի շարք ոլորտներում, այդ թվում՝ տեղեկատվական նյութեր, բյուջետավորման այլ հնարավոր մեթոդաբանություն և միասնական բյուջետային կատեգորիաներ, ինչպես նաև կարող է

Էջ 14` 14-ից

ընդունել կանոնակարգեր: Տե՛ս Ջարգացման խանգարումներ
ունեցող անձանց սոցիալական ապահովության վարչության
ինտերնետային կայքը ներդրում կատարելու
հնարավորությունների մասին տեղեկանալու համար՝
www.dds.ca.gov::

«Համանդամություն ունեցող իրավունքներ - Կալիֆորնիա»-ն
ֆինանսավորվում է մի շարք աղբյուրներից: Ֆինանսավորման
աղբյուրների ամբողջական ցանկի համար տե՛ս
[http://www.disabilityrightsca.org/
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html).